

կերպման կանոնների մասին տեղեկատվության տրամադրում դրա հնարավոր օգտագործողներին,

✓ մաքսային կանոնները խախտողների և մաքսանենգների մասին միջգերատեսչական տեղեկատվական միասնական բազայի ստեղծում,

✓ մաքսային վեճերով դատական գործընթացներում խորհրդատվական աջակցության տրամադրում,

✓ գործառնական ծախքերի (մաքսատուրքեր, հարկեր, հաշվապահական հաշվառում, անուիտ և այլն) նվազեցմանն ուղղված ծառայությունների մատուցում,

✓ մաքսային բրոքերներին խորհրդատվական և վերահսկողական աջակցության տրամադրում գործարար ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում:

Ինչ վերաբերում է մարքեթինգային կենտրոնին, այն պետք է իրականացնի հետեյալ գործառնականները.

✓ մաքսային վճարովի ծառայությունների ոլորտի զարգացման հեռանկարային ծրագրերի մշակում ԱՏԳ սուբյեկտների համար,

✓ մաքսային ծառայությունների շուկայում պահանջարկի և գնագոյացման մեխանիզմների համալիր հետազոտություն, դրա արդյունքների հիման վրա համապատասխան առաջարկների ներկայացում:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ վճարովի հիմունքներով մաքսային ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար կարելի է նշանակություն ունի ոչ միայն խորհրդատվական, այլ նաև ֆինանսատնտեսական աջակցության տրամադրումը: Այս ուղղությամբ առաջարկվում է ստեղծել ֆինանսական տեխնոլոգիաների կիրառման կենտրոն, որն առաջին հերթին պետք է իրականացնի հետեյալ գործառնականները.

✓ առեւտրային հիմունքներով գործող մաքսային ենթակառուցվածքային օբյեկտների (մաքսային բրոքերների, ժամանակավոր պահպանության պահեստների, անմաքս առեւտրի խանութների, ավտոտրանսպորտային միջոցների կանգառների, անցակետերի և այլն) զարգացման համար վարկավորման լայն գործիքակազմի կիրառումը,

✓ մաքսային փորձաքննության, էլեկտրոնային հայտարարագրման, մաքսային ենթակառուցվածքների ստեղծման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների լիզինգով ձեռքբերման հարցում մաքսային ծառայություններ մատուցող կառույցներին գործուն աջակցության տրամադրումը:

Մաքսային ծառայություններ մատուցող կազմակերպությունների ֆինանսատնտեսական արդյունավետության բարձրացման համար կարելի է նշանակություն ունի տեխնոլոգիական միեւնույն շղթայի մաս կազմող տարբեր ծառայություններ մատուցող կազմակերպությունների փոխգործակցության համար պայմանների ստեղծումը: Այստեղ խոսքը մաքսային բրոքերների, լոգիստիկական և ապահովագրական ընկերությունների մասին է, որոնց համագործակցության պարագայում հնարավոր է պահեստային տարածքների տրամադրման, տրանսպորտային փոխադրումների, մաքսային և ապահովագրական ծառայությունների

համալիր տրամադրումը ԱՏԳ մասնակիցներին, ինչը առեւտրային հիմունքներով գործող մաքսային սպասարկման ինստիտուտների մրցունակության բարձրացման լուրջ ներուժային հնարավորություններ է պարունակում:

Մաքսային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստող գործոնների երրորդ կարեւոր խումբը կադրային ներուժի հզորացումն է: Այդ նպատակով առաջարկվում է մաքսային ծառայությունների համակարգի կատարելագործման միջոցառումների շարքում ներառել մաքսային գործունեության և մաքսային գործարարության կադրային աջակցության կենտրոնի ստեղծումը: Կենտրոնի հիմնական գործառնական պետք է լինեն մաքսային գործունեության և մաքսային սպասարկման առանձին տեսակների գծով կադրերի ուսուցման, պատրաստման, վերապատրաստման, ատեստավորման և լիցենզավորման ծրագրերի մշակումն ու օգտագործումը:

Այս բոլոր ուղղություններով համապատասխան միջոցառումների իրագործումը հնարավորություն կտա որակապես բարձրացնել ՀՀ մաքսային համակարգի արդյունավետությունը, ստեղծել սպասարկումային ուղղվածություն ունեցող մաքսային համակարգ, որն իր հիմնական բնութագրիչներով կհամապատասխանի միջազգային առեւտրատնտեսական, սոցիալ-քաղաքական հարաբերությունների զարգացման արդի պայմաններում մաքսային ծառայություններին ներկայացվող պահանջներին:

1. Մաքսային հարակից ենթակառուցվածքների ներքո սույն աշխատանքում հասկացվում են ծառայությունների մատուցման նպատակով տնտեսավարող սուբյեկտների ստեղծած ենթակառուցվածքները: Այս առումով մաքսային հիմնական ենթակառուցվածքները պետական մաքսային գործառնական իրագործման համար ստեղծված ենթակառուցվածքներն են:  
2. Ընդունվել է ՀՀ ՊԵԿ նախագահի 2008թ. դեկտեմբերի 10-ի թիվ 187-Ս հրամանով:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Մաքսային օրենսգրք, 06.07.2000  
2. ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2008-2012թթ. ծրագիր, ՀՀ ՊԵԿ նախագահի 2008թ. դեկտեմբերի 10-ի թիվ 187-Ս հրաման  
3. Հարությունյան Ա., Մաքսային գործի կազմակերպման հիմնահարցեր, Ուսումնական ձեռնարկ, Եր., Էդիթ Թանգյանի անվ. տպարան, 2004  
4. Макрусов В.В., Информатизация в сфере внешнеэкономической деятельности: целостно-эволюционный подход, Таможня в условиях глобализации внешней торговли, М: РИО ПТА, 2000, с. 221-244.  
5. Назаренко В.М., Назаренко К.С., Таможенное обслуживание внешнеэкономической деятельности, М.: Экзамен, 2001.  
6. Сафронов А.В., Актуальность развития маркетинга в системе управления государственными таможенными услугами, Таможенное дело, экономика и право на Дальнем Востоке, Сборник научных трудов, Под общ. ред. В.И. Дьякова, Владивосток: ВФ ПТА, 2006, с. 134-139.

ՀՀ Մաքսային օրենսգրքի կարելի ուղենիշերից մեկը արտաքին տնտեսական գործունեությունը բացառապես տնտեսական մեթոդներով կարգավորելու պայմանների ստեղծումն է, ինչը, ի թիվս այլ գործոնների, ենթադրում է մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման նպաստավոր պայմանների ստեղծում, մաքսային բոլոր ընթացակարգերի պարզեցում և արագացում: Այս համատեքստում կարելիորագույն նշանակություն է ստանում ապրանքների համընդհանուր մաքսային հսկողությունից հրաժարումը և ռիսկերի կառավարման համակարգի (ՌԿՀ) ներդրումը:

ՌԿՀ-ն համաշխարհային պարկիտկայում դիտարկվում է որպես մաքսային հսկողության հիմնական փոխփոխարկություն: Համաշխարհային առեւտրի ծավալները տարեցտարի աճում են ավելի ու ավելի բարձր տեմպով և ակնհայտ է, որ որքան պետությունն չի կարող ստեղծել մաքսային այնպիսի համակարգ, որն ի վիճակի կլինի համընդհանուր և արդյունավետ հսկողություն իրականացնել արտաքին առեւտրային գործառնականությունների նկատմամբ: Բնականաբար՝ մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման, արտաքին առեւտրային գործառնականությունների արհեստական սահմանափակումների վերացման հրամայականը այլ տարբերակ չի թողնում, քան ընտրողականության վրա հիմնված մաքսային հսկողության համակարգի կազմակերպումը: Ընտրող-

ողականության սկզբունքն առաջին հերթին ենթադրում է, որ բուն մաքսային հսկողության իրականացմանը պետք է նախորդի լուրջ վերլուծական աշխատանք, որի արդյունքում կհիմնավորվի հսկողության այս կամ այն մեթոդի ընտրությունը:

Չարգացած տնտեսությամբ երկրներում մաքսային համակարգերը վերջին մի քանի տասնամյակի ընթացքում աստիճանական անցում են կատարում ընտրողականության սկզբունքի կիրառման մաքսային հսկողության պրակտիկայի ամբողջական գործադրմանը՝ այս ողջ ժամանակահատվածում մշակելով, շարունակաբար կատարելագործելով և ներդնելով մաքսային հսկողության արդյունավետության բարձրացմանը նպաստող մեթոդներ, մեխանիզմներ և գործիքներ: Ներկայում ռիսկերի կառավարման համակարգի վրա հիմնված մաքսային հսկողության մեխանիզմների ներդրումն օբյեկտիվ անհրաժեշտություն է այն բոլոր երկրների համար, որոնք իրականացնում են տնտեսության, պետական կառավարման ամբողջ համակարգի ինստիտուցիոնալ և կառուցվածքային վերափոխումներ, և որտեղ արդյունավետ սկզբունքների վրա հիմնված արդիական մաքսային համակարգի կազմավորումը օբյեկտիվ անհրաժեշտություն է: Այս երկրների շարքում է, քանակաբար, նաև Հայաստանի Հանրապետությունը: Հարկ է նշել, որ ՀՀ մաքսային ծառայությունում ստեղծված վարչարարության եռամակարդակ համակարգը, որը միավորված

Ե տեղեկատվական միասնական ցանցով, ստեղծում է արդյունավետ ՌԿՅ ձեռնարկման անհրաժեշտ պայմանները:

Ընդհանուր առմամբ՝ ՌԿՅ հիմնական նպատակը մաքսային վարչարարության ժամանակակից համակարգի ստեղծումն է, որը հնարավորություն կտա ապահովել մաքսային արդյունավետ հսկողության իրականացում՝ ելնելով ընտրողականության սկզբունքից եւ հիմնված լինելով ՀՀ մաքսային ծառայության ռեսուրսները մաքսային մարմինների առավել կարելու եւ գերակա ուղղությունների միջեւ օպտիմալ բաշխելու վրա: Համակարգի կազմավորումն ուղղված է ՀՀ մաքսային օրենսդրության այնպիսի խախտումների կանխմանը, որոնք.

- ✓ կայուն բնույթ ունեն,
- ✓ կապված են նշանակալի չափերով մաքսային վճարների կատարումից խուսափելու հետ,
- ✓ հարվածում են հայրենական ապրանքարտադրողների մրցունակությանը,
- ✓ շոշափում են պետության կենսական այլ շահերը, որոնց իրացման ապահովումը վերապահված է մաքսային մարմիններին:

Մաքսային մարմինների գործառնությունների կատարման արդյունավետության բարձրացման վրա ՌԿՅ-երի ներդրման դրական ազդեցությունը հիմնավորվում է արտասահմանյան շատ երկրների մաքսային մարմինների աշխատանքային փորձով:

Հարկ Ե նշել, որ ՌԿՅ օգտագործում ենթադրող մաքսային հսկողության հիմունքները են սկզբունքները ամրագրված են Մաքսային ընթացակարգերի պարզեցման եւ ներդաշնակեցման կոնվենցիայի (Կիոտոյի կոնվենցիա) 1999թ. վերափոխված տարբերակում: Այդ սկզբունքները ենթադրում են.

- մաքսային հսկողությունը սահմանափակվում է մաքսային օրենսդրության կատարման ապահովման համար անհրաժեշտ նվազագույնով,
- մաքսային հսկողության ձեւերի ընտրության ժամանակ օգտագործվում է ռիսկերի կառավարման համակարգ,
- մաքսային ծառայությունը ռիսկերի վերլուծության մեթոդ է կիրառում ստուգման ենթակա ապրանքների եւ անձանց, ինչպես նաեւ ստուգման աստիճանի որոշման համար,
- մաքսային ծառայությունը կիրառում է օրենսդրության չկատարման հավանականության գնահատման միջոցառումների համակարգի վրա հիմնվող ռազմավարություն:

Ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը համահունչ է նաեւ մաքսային վարչարարության համար Առեւտրի համաշխարհային կազմակերպության նախատեսած չափորոշիչներին, որոնց համաձայն՝ մաքսային վարչարարության որակի բարելավումը ենթադրում է.

- ✓ մաքսային ձեւակերպման ժամանակի կրճատում,
- ✓ ԱՏԳ մասնակիցների համար մաքսային մարմինների աշխատանքի թափանցիկություն եւ կանխատեսելիություն,
- ✓ ԱՏԳ մասնակիցների հետ մաքսային մարմինների հարաբերություններում գործընկերային մոտեցում:

Մաքսային ոլորտում ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում «ռիսկ» հասկացությունը ենթադրում է տվյալ երկրի մաքսային օրենսդրության չկատարման հավանականությունը: Ռիսկի այս մեկնաբանության պարագայում ռիսկի կառավարման ներքո կարելի է հասկանալ ռիսկերի կանխման ու նվազեցման միջոցառումների մշակման եւ կենսագործման, դրանց կիրառման արդյունավետության գնահատման, ինչպես նաեւ մաքսային ընթացակարգերի եւ գործառնությունների կիրառման նկատմամբ հսկողության (ինչը ենթադրում է մաքսային մարմինների մոտեղած տեղեկատվության անընդհատ տրամադրում, վերլուծություն եւ վերանայում) համակարգված աշխատանք: Վերը նշվածից ելնելով՝ կարելի է հստակեցնել մաքսային ոլորտում ռիսկերի կառավարման համակարգի հիմնական խնդիրները.

- ՌԿՅ-ի գործարկումն ապահովող տեղեկատվական միասնական տարածության ստեղծում,
  - ռիսկերի բացահայտման մեթոդների մշակում,
  - մաքսային իրավախախտումների կատարմանը նպաստող պատճառների եւ պայմանների բացահայտում,
  - ռիսկերի ծագման դեպքում հնարավոր վնասի գնահատում,
  - ռիսկերի կանխման կամ դրանց բացասական ազդեցության նվազեցման հնարավորության որոշում, ինչպես նաեւ այդ նպատակի իրագործման համար պահանջվող ռեսուրսների որոշում ու դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմների մշակում,
  - կիրառվող միջոցառումների արդյունավետության գնահատման մեթոդների մշակում եւ կենսագործում,
  - ռիսկերի կանխման կամ դրանց բացասական ազդեցության նվազեցման միջոցառումների մշակում եւ գործնական իրագործում, այս գործընթացի նկատմամբ արդյունավետ հսկողության սահմանում,
  - ռիսկերի կառավարման միջոցառումների արդյունավետության գնահատում եւ կառավարչական որոշումների ճշգրտում,
  - մաքսային հսկողության ձեւերի կիրառման արդյունքների, մաքսային իրավախախտումների կատարմանը նպաստող պատճառների եւ պայմանների վերաբերյալ տեղեկատվության հավաքում եւ վերլուծություն՝ մաքսային հսկողության ռազմավարության արդիականացմանն ուղղված առաջարկների մշակման նպատակով:
- ՌԿՅ-երը հիմնվում են մաքսային ծառայության հիմնական խնդիրների լուծման ապահովող հետեւյալ առանցքային սկզբունքներով.
- նպատակային ուղղվածության սկզբունք. սա ենթադրում է մաքսային ծառայության բոլոր խնդիրների եւ դրանց լուծման միջոցների ենթակայություն երկրի մաքսային օրենսդրության պահանջների կատարման ապահովման նպատակին,
  - ամբողջականության սկզբունք. սա նշանակում է, որ մաքսային ծառայության կառուցվածքային ստորաբաժանումները պետք է մշակեն եւ օգտագործեն ռիսկերի կառավարման գործառնության ենթահամակարգեր՝ որպես երկրի մաքսային ծառայության միասնական համակարգի տարրեր.

## ՄԱՔՍԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Առեւտրի ստուգման թեմա՝  
ՀՀ մաքսային համակարգի  
ինստիտուցիոնալ զարգացման  
հիմնական ուղղությունները

Գիտական ղեկավար՝  
Սամսոն ԴԱՎՈՅԱՆ  
Տնտեսագիտության դոկտոր,  
պրոֆեսոր

Մուրադ  
ՍԱՐԳՍՅԱՆ  
Ռուս-  
հայկական  
(Սլավոնական)  
համալսարանի  
հայցորդ

● տեղեկատվական միասնականության սկզբունք. տեղեկատվական աղբյուրները պետք է լինեն համատեղելի, դրանց մշակման եւ վերլուծության ընթացակարգերի հիմքում պետք է դրվեն միասնական մոտեցումներ, տեղեկատվական հոսքերը պետք է փոխկապված լինեն մաքսային վարչարարության բոլոր մակարդակներում,

● օրինականության սկզբունք. սա նշանակում է, որ ռիսկերի կանխման կամ նվազեցման բոլոր միջոցառումները պետք է համապատասխանեն երկրի օրենսդրությանը,

● ռիսկերի կառավարման միասնականության սկզբունք. ռիսկերի կանխման կամ նվազեցման ուղղությամբ կիրառվող միջոցառումների առնչությամբ ընդունվող կառավարչական որոշումները պետք է հիմնված լինեն միասնական սկզբունքների վրա:

Ռիսկերի կառավարման համակարգի առջեւ դրված խնդիրների արդյունավետ լուծումն ապահովելու համար այն պետք է ներառի հետեւյալ առանցքային բաղադրիչները, առանց որոնց համակարգի ՌԿԻ-ի նպատակային եւ արդյունավետ գործունեությունը անհնար է.

✓ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության հավաքում եւ մշակում,

✓ ռիսկերի բացահայտում եւ վերլուծություն,

✓ ռիսկերի կառավարման միջոցառումների մշակում եւ իրագործում,

✓ կիրառված միջոցառումների արդյունքների ընդհանրացում եւ առաջարկների պատրաստում:

Չամակարգի առաջին բաղադրիչը ենթադրում է մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մասին գոյություն ունեցող ամբողջ տեղեկատվության տարբեր աղբյուրներից հավաքագրում եւ մշակում: Ըստ որում՝ այստեղ կարող է խոսք լինել այնպիսի տեղեկատվության մասին, ինչպես օրինակ՝

● մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մասին վիճակագրական տեղեկատվությունը, որը կարող է ստացվել ներմուծող եւ արտահանող երկրների վիճակագրական մարմինների կողմից,

● առեւտրային գործընկեր-երկրների առեւտրատնտեսական ներուժի մասին տեղեկատվությունը,

● երկրի իրավապահ եւ ստուգող այլ մարմիններից, գործընկեր-երկրների մաքսային ծառայություններից ստացվող տվյալները,

● մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների, ինչպես նաեւ մաքսային կանոնների խախտման, մաքսային գործի ոլորտում իրավախախտումների եւ հանցագործությունների մասին տեղեկատվությունը,

● մաքսային բորքերների, մաքսային պահեստների սեփականատերերի, մաքսային փոխադրողների գործունեության մասին տեղեկատվությունը,

● մաքսային գործառնությունների իրականացման ժամանակ հայտարարագրվող տվյալները,

● տրանսպորտային-լոգիստիկական սխեմաների մասին տեղեկատվությունը:

Ավելորդ չէ ընդգծել այն փաստը, որ ռիսկերի կանխման եւ նվազեցման նպատակով կայացվող որոշումների արդյունավետությունը եւ հիմնավորվածությունը պայմանավորող կարեւոր գործոն է օգտագործվող տեղեկատվության ամբողջականությունը, օպերատիվությունը եւ հավաստիությունը: Այս համատեքստում կարեւոր նշանակություն ունի տեղեկատվության տարբեր, միմյանցից անկախ աղբյուրների առկայությունը, տեղեկատվության հավաքման եւ մշակման ճիշտ ու գիտականորեն հիմնավորված մեթոդների կիրառությունը, տվյալների թարմացման պարբերականության ապահովումը եւ մաքսային մարմինների համակարգում տեղեկատվության օպերատիվ շրջանառության կազմակերպումը:

Տեղեկատվության հավաքագրումից եւ մշակումից հետո ՌԿԻ-ի շրջանակներում պետք է իրականացվեն *ռիսկերի բացահայտում եւ վերլուծություն*:

Մաքսային ոլորտում օրենսդրության պահանջների խախտման ռիսկի վերլուծությունը ենթադրում է մաքսային մարմինների մոտ եղած տեղեկատվության համակարգված օգտագործում՝ ռիսկերի ծագման պատճառների եւ պայմանների որոշման, ռիսկերի նույնականացման եւ երկրի մաքսային օրենսդրության չկատարման հնարավոր հետեւանքների գնահատման համար: Կարելի է

առանձնացնել մաքսային իրավախախտումների ռիսկերի երկու տիպ՝ բացահայտված ռիսկ եւ հնարավոր ռիսկ: Բացահայտված ռիսկը արդեն կայացած փաստ է, երբ օրենսդրության խախտումն արդեն տեղի է ունեցել, եւ մաքսային մարմիններն այդ փաստի մասին ունեն տեղեկատվություն: Ջնարավոր կարելի է համարել այն ռիսկը, որը դեռեւս չի դրսևորվել, սակայն դրա ծագման պայմաններն առկա են: Այս համատեքստում այն ապրանքները, որոնք տեղափոխվում են մաքսային սահմանով, եւ որոնց առնչությամբ կա՛մ բացահատվել են ռիսկեր, կա՛մ առկա են հնարավոր ռիսկեր, հանդես են գալիս որպես ռիսկային ապրանքներ: Իսկ այն ապրանքները, որոնք մաքսային սահմանով տեղափոխվելիս ամենայն հավանականությամբ կարող են հայտարարագրվել ռիսկային ապրանքների փոխարեն, դիտարկվում են որպես ծածկման ապրանքներ:

Մաքսային ռիսկերի կառավարման համակարգում ռիսկերի վերլուծությունը, առանձին ընթացակարգերի եւ գործողությունների համալիր է, որի բաղադրիչները տրամաբանական, փոխպայմանավորված, հաջորդական կապի մեջ են: Ըստ այդմ՝ մաքսային ռիսկերի վերլուծությունը, որպես կանոն, բաղկացած է հետեւյալ փուլերից.

✓ ռիսկերի վրա ազդող պայմանների եւ գործոնների որոշում,

✓ մաքսային իրավախախտման հավանականությունն պարունակող մաքսային գործառնությունների բացահայտում,

✓ վերլուծության օբյեկտների հստակեցում,

✓ ռիսկերը բնութագրող չափանիշների եւ պարամետրերի (փոխադրումների քանակը, ապրանքների անվանացանկը, ապրանքները ստացող եւ այլն) որոշում,

✓ ռիսկի ցուցիչների հստակեցում (որպես ցուցիչներ հանդես են գալիս նախօրոք տրված պարամետրերով որոշակի չափանիշները, որոնցից շեղումը թույլ է տալիս իրականացնել հսկողության օբյեկտի ընտրությունը),

✓ ռիսկերի ծագման դեպքում հնարավոր վնասի մեծության գնահատումը:

Ռիսկերի բացահայտումից եւ վերլուծությունից հետո անհրաժեշտ է մշակել եւ իրականացնել *ռիսկերի կառավարման* միջոցառումներ: Այս փուլում կարեւոր նշանակություն ունի ռիսկի կառավարման միջոցառումների իրագործման դեպքում հնարավոր արդյունքների եւ բացասական հետեւանքների գնահատումը, այդ հետեւանքներն ի հայտ գալու հավանականության որոշումը, ինչպես նաեւ ռիսկերի կանխման կամ դրանց բացասական ներգործության նվազեցման նպատակով իրականացվող միջոցառումների վերլուծությունը, վերջինի արդյունքների հիման վրա առավել արդյունավետ միջոցառման ընտրությունը:

Ըստ էության՝ այս փուլում հիմնական նպատակը ռիսկի պրոֆիլների մշակումը եւ իրագործումն է: Ռիսկի պրոֆիլ արտահայտությունը ռիսկերի կառավարման համակարգերի գործարկման միջազգային պրակտիկայում լայն կիրառություն եւ առանցքային նշանակություն ունի:

Առավել ընդհանուր ձեւակերպմամբ՝ ռիսկի պրոֆիլը ռիսկի ոլորտի, ռիսկի ցուցիչների մասին տեղեկությունների, ինչպես նաեւ ռիսկի կանխման կամ նվազեցման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների կիրառման ցուցումների համախումբն է: Ռիսկի ոլորտը վերլուծության առանձին օբյեկտներն են, որոնց առնչությամբ պահանջվում է մաքսային հսկողության առանձին ձեւերի կիրառում, մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացում:

Ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության ու նպատակայնության ապահովման, շարունակական զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման տեսանկյունից մեծ կարեւորություն ունի համակարգում բացառված կապի ապահովումը: Այս պարագայում պետք է լուրջ ուշադրություն դարձնել ռիսկերի կանխման կամ նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունքների ընդհանրացմանը, դրա հիման վրա համակարգի հետագա կատարելագործման նպատակ ունեցող առաջարկների մշակմանը:

Մաքսային ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում մշակվող եւ իրագործվող միջոցառումները ներգործության բավականացափ լայն դաշտ ունեն, հետեւաբար՝ դրանց արդյունքները բազմազան ու բազմաբնույթ կարող են լինել՝ եւ հանդես գալ, օրինակ, մաքսային սահմանով ապրանքների անօրինական փոխադրումների կրճատմամբ, մաքսային հսկողության արդյունավետության բարձրացմամբ, մաքսային վճարումների կատարման մակարդակի բարձրացմամբ, ապրանքաշրջանառության արա-

զացմամբ, մաքսային ձեւակերպումների ժամանակի կրճատմամբ եւ այլն: Այս պարագայում իրագործվող միջոցառումների արդյունավետության գնահատումը ենթադրում է առանձին ուղղություններում ստացված մասնակի արդյունքների ամփոփում եւ ընդհանրացում:

Այսպիսով՝ վերը նշվածից պարզ է դառնում, որ ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը մաքսային մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման նախադրյալներ է ստեղծում: ՌԿԶ-ն, ինչպես համոզվեցինք, բարդ համալիր է, դրա մշակումը եւ ներդրումը բավականաչափ ընդգրկուն գործընթաց է, որն իրենից ներկայացնում է ՌԿԶ-ի կազմավորման մեկնարկային պայմանների ապահովման եւ առաջնային ընթացակարգերի կազմակերպման բազմափուլ ընթացակարգ:

Մեր համոզմամբ՝ ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը նպատակահարմար է իրականացնել հետեւյալ հաջորդական փուլերով.

- ✓ մաքսային օրենսդրության խախտումների ամփոփ վերլուծություն,
- ✓ մաքսային մարմինների կողմից ՌԿԶ տարրերի կիրառումը կանոնակարգող նորմատիվ-իրավական բազայի ստեղծում,
- ✓ ռիսկերի նվազեցման ուղղված միջոցառումների համակարգում,
- ✓ ռիսկի չափանիշների համակարգի մշակում,
- ✓ մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության մեթոդների կիրառման գործիքակազմի ընդլայնում, ընտրողականության ապահովում,
- ✓ ռիսկերի նվազեցման միջոցառումների տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդաբանության մշակում եւ կիրառում,
- ✓ մաքսային համակարգում տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ներդրում,
- ✓ ՌԿԶ տվյալների բազայի ստեղծում եւ շարունակական թարմացում:

Մեր փոխադրյալ էր արդյունավետության գնահատումը ենթադրում է առանձին ուղղություններում ստացված մասնակի արդյունքների ամփոփում եւ ընդհանրացում:

Մեր համոզմամբ՝ ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը նպատակահարմար է իրականացնել հետեւյալ հաջորդական փուլերով.

- ✓ Определение долгосрочной концепции (стратегии);
- ✓ Разработка и утверждение прогнозов экспорта и импорта, а также валютного, внешнеторгового и платежного балансов;
- ✓ Контроль за деятельностью министерств, ведомств, концернов и ассоциаций, производственных объединений и предприятий всех форм собственности, вовлеченных во внешнеэкономическую деятельность;
- ✓ Создание условий и стимулов для более активного и эффективного участия страны в международном разделении труда.

Государство с целью защиты своих национальных интересов, интересов всего общества регулирует внешнеэкономическую деятельность, а также воздействует тем или иным способом на участников возникающих при этом отношений, оказывая им поддержку или создавая неблагоприятные условия для осуществления отдельных видов внешнеэкономической деятельности.

Государственное воздействие на субъекты внешнеэкономической деятельности может быть прямым (например, предоставление конкретным экспортам льгот по уплате таможенных пошлин) или косвенным (устанавливая высокие импортные тарифы на какую-либо продукцию, государство побуждает участников внешнеэкономической деятельности импортировать не эти, а другие товары).

Такое воздействие осуществляется принятием законодательных нормативных актов, регулирующих отношения, возникающие при ведении внешнеэкономической деятельности, и имеет своей целью защиту как общественных, так и частных интересов.

Ему присущи следующие направления:

- Обеспечение упрочения экономики, ее стабильности и развития.
- Все государственное регулирование направлено на эти цели. В частности, государство составляет прогнозы по объемам и структуре экспортно-импортных операций, осуществляет таможенный, а также валютный контроль, обеспечивая репатриацию валютной выручки с тем, чтобы не допустить экспорта товаров и ресурсов по заниженным ценам и отток капитала из страны и, следовательно, защитить свои экономические интересы.
- Обеспечение безопасности здоровья граждан и защиту окружающей среды.
- Устанавливаются специальные требования к ввозу определенных товаров, предусматривая наличие у импортера сертификата качества, ветеринарных, санитарных свидетельств.
- Обеспечение возможности доступа отечественных хозяйствующих субъектов на зарубежные рынки.

В этих целях правительство заключает международные соглашения, стремясь обеспечить благоприятный режим экспорту своих товаров, а также принимает меры к недопущению его ограничения. В мировой практике принято также заключать соглашения с интеграционными группировками и государствами, где существует угроза одностороннего введения антидемпинговых или иных ограничительных мер в отношении импорта национальных товаров. В случае заключения соглашений экспорт этих товаров ограничивается установленными квотами.

Необходимо отметить, что зарубежными странами предъявляются требования к импортируемым товарам как по качеству, так и по маркировке. В разных странах существует различный порядок ввоза товаров, предусматривающий наличие целого ряда различных документов. В практике мировой торговли широко применяются ограничения на импорт ряда товаров, которые могут быть как временными, так и постоянными.

Обладание информацией по вопросам условий осуществления экспорта – необходимая предпосылка для успешного ведения внешнеэкономической деятельности, для достижения должного уровня конкурентоспособности национальных предпринимателей. В этих целях правительства создают системы по оказанию информационных и консультационных услуг отечественным экспортерам, что обусловлено обязанностью государства содействовать развитию экономики, в том числе экспорту национальных товаров. Соответствующая база наличествует в виде

## Օգտագործված գրականություն

1. ՀՀ Մաքսային օրենսդրություն. 06.07.2000
2. Մաքսային ընթացակարգերի պարզեցման եւ ներդաշնակեցման մասին միջազգային կոնվենցիա (Վիտտոյի վերանայված կոնվենցիա, 1999)
3. Тимошенко И.В., Таможенное дело, М.: Экономика, 2001.
4. Таможенное обслуживание внешнеэкономической деятельности, М.: Экзамен, 2001.
5. Customs in the 21st Century, Enhancing Growth and Development through Trade Facilitation and Border Security, WCO, June 2008.